

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԱՐԻՍ

Տարեկան . . 12 Ձր.
Վեցամսեայ . . 6 "


ԱՐՏԱՍԱՆՍՈՒՄ

Իրիւ թիւ մեկ ծաւրով
Տարեկան . . 14 Ձր.
Վեցամսեայ . . 7 "

ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 Տօլար
Վեցամսեայ 1.50 "
Կ Ա Ն Խ Ի Կ

Դրանոյցիւն տուիւ
20 շաբաթ



Լ Ր Ա Փ Ի Ր

Ա Ձ Ք Ա Յ Ի Ն Ե Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄՆՆ ԶՈՐԵՔԵԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ

Հ Ա Ս Յ Է

Rédaction du journal

„Iravounk“

VARNA (Bulgarie)

Редакция

на ВѢСТНИКЪ

„Иравункъ“

ВАРНА (България)

Գրողները եւս
չեն տրուիր

ՉԸ ՎՃԱՐՈՂՆԵՐՈՒՆ

Մեր այն բաժանորդները որոնք ցարդ իրենց բաժնեկիսները չեն վճարած, բող հաճին թիւ փոյթը չորկել, նկատելով թէ տարեշրջանը կը լրանայ:

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄ

Մեր բարեկամներէն Տ. Ակա. բի այս խորագրով երկար յօդուած մը գրած է մեզ հրատարակելու խնդրանքով. Նույնին կարելիութիւնը պարտք կը դնէ մեր վրայ այդ յօդուածին գոնէ կարելիութիւնը մասերը ներկայացնել մեր ընթերցողներուն:

Յօդուածագիրը պուրկարահայ վարժարաններէն—որոնք միայն նախակրթարաններ են—նպատակաւ յարմար ուղղութեան մը մէջ դնելու և մեր զաւակներուն թանկագին ժամանակը խնայողութեամբ և օգտակարապէս գործածելու համար, կառավարիչ գլխաւորապէս պուրկար նախակրթարաններու ծրարագրէն քաղուած միօրինակ ընդհանուր ծրագիր մը ընդունելով, որպէս զի մեր նախակրթարանին ընթացքը աւարտող աշակերտները, առանց ժամանակի կորուստի, կարենան ընդունուիլ պուրկար ժիմնալ վարժարաններու համապատասխան դասընթացներուն մէջ:

Տ. Ակարի հետեւեալ տողերով աւելի կը ծանրանայ մեր ուսուցիչներու ընտրութեան մասին. և արդէն բուն դարձան ալ ասոր մէջ պէտք է փնտռել. այսինքն գործին մարդը գտնել, ու ոչ թէ մարդուն համար գործ ճարել:

«Պուրկար նախակրթարաններու մէջ ուսուցիչ կընդունուին միմիայն անոնք որ աւարտած են վարժապետանոցի դասընթացը: Եւ որովհետեւ մեր մէջ չկայ վարժապետանոց մը, ուստի կը մնայ իբրեւ ուսուցիչ ընդունիլ միմիայն անոնք որ աւարտած են ազգային կիմնադրարի դասընթացը: Ահա, ևստիկ մեր հանրաժանութ գիմնա-

դիաները. Սանատարիան վարժարան, Կ. Պոլսոյ Մխիթարեանց վարժարան, Կեդրոնական վարժարան, Պէրպերեան վարժարան, Մուրադ-Պափայեան վարժարան, Գէորգեան ճեմարան, Թիֆլիսի ուսումնարան, Երեւանի ուսումնարան, Շուշիի ուսումնարան, Նախիջեւանի ուսումնարան, Հազարեան ճեմարան ուր կայ հայերէն, Կ. Պոլսոյ Ամերիկեան Ռապերթ Քոլէճը՝ ուր եւս կայ հայերէն, վերջապէս Ալեքսանդրի և Մարգարեանի ամերիկեան քոլէճները:

«Որքան ցաւով է նկատել որ արական այսքան գիմնադիաներու մէջ չկայ գէթ մէկ հաստ իրական նախնորդական գիմնադիւ: Ուստի որքան դժուար պիտի ըլլար գտնել ընտիր ուսուցչուհիներ մեր իգական նախակրթարաններուն համար. և որքան աւելի պէտք էր որ մեր իգական սերունդը ստանար հիմնական և ընտիր նախակրթութիւն մը, այն իգական սերունդը որ պիտի ըլլայ ապագայ մայրոք թիւերը կամ եւս ազգութիւնը: Ահա թէ ինչպէս կը մնայ դարձանել ինչեալ անհրաժեշտ պակասը:

«Բայց գոնէ թուրքիոյ մէջ կային իգական շաշագոյն և հանրաժան վարժարաններ. Բերայի արհեստանոցը, Գում-Գաբուի Տիկ-Ուսում. Ընկ. վարժարանը, ամերիկեան Հով Սքոթ վարժարանը ուր կար հայերէն. իսկ Ռուսիոյ մէջ կային իգական շաշագոյն վարժարաններ՝ Թիֆլիսի Գալիանեանը և Երեւանի Շուշանեանը: Ահա միայն և միմիայն այս շաշագոյն և հանրաժան վարժարաններէն ընտրացաւ արտ և վկայեալ աշապետութեան հիմնադրարի կը մնար ընդունիլ իբրեւ ուսուցչուհի: Եթէ երբեք անկարելի կըլլար վերոյիշեալ հաստատութիւններէն «ընթացաւարտ» և «վկայեալ» ուսուցչուհիներ գտնել իգական նախակրթարանին համար—ուր բացարձակապէս անհրաժեշտ է անկարելի էր ընդունիլ ոչ—ընթացաւարտ և ոչ—վկայեալ ինքնակոչ ուսուցչուհիներ—այն ատեն կարելի էր ընդունիլ ամուսնացած այս ուսուցիչներ: Ռուսիոյ մէջ, վերջապէս, կային շատ ուսուցիչներ երկու-

պեռէ՝ որ ընթացաւարտ եղած են ազգային կամ ուսական (երկսեռ) գիմնադիաներէն կամ Եւրոպայի վարժապետանոցներէն: Եւ որովհետեւ ազգային վարժարանները գոցուեցան այնտեղ, ուստի անպաշտօն կը գտնուէին վկայեալ շատ ուսուցիչներ և ուսուցչուհիներ: Ուրեմն, թէ՛ ուսուցիչներ, թէ՛ մանուկներ ուսուցչուհիներու ընտրութեանը համար, կը մնայ մեծապէս օգտուիլ այս դժուարիւթեամբ մասամբ մը մեզ համար բարեբախտ պարագային:

«Վերջապէս, ըլլալ սրական, ըլլալ մանուկներ իգական, անպատճառ ընտրացաւարտ և վկայեալ պարտին ըլլալ մեր ուսուցիչները—միմիայն վերոյիշեալ «հանրաժանութ» հաստատութիւններէն. Եթէ ոչ, ինչ որ ալ եղած ըլլան, բացարձակապէս անհրաժեշտ է անկարելի է ընդունիլ «ինքնակոչ» ուսուցիչներ... մեր երկսեռ սերնդի պաշտօնի՝ յարկերուն մէջ: Եւ արդէն կրթական ընդհանուր օրէնքը—դարձեալ և միշտ կրկնելով—բնաւ չի հրաժարուիլ իբրեւ ուսուցիչ անոնք որ աւարտած չեն վարժապետանոցի դասընթացը և ի՛նչ ուրիշ չունին ուսուցչական վկայագիր: Ահա ամենափափուկ կէտը մեր հիմնական նախակրթութեան, որուն համար պէտք է խստապահանջ ըլլալ իբրեւ ստիպողական անհրաժեշտութիւն մը:

«Վերոյիշեալ պայմաններէն դուրս գտնուող երկսեռ անձերը բացարձակապէս չպիտի կրնան ուրեմն ընդունուիլ իբրեւ ուսուցիչ մեր երկսեռ նախակրթարաններու մէջ... Ո՛չ զպոքական ընդհանուր օրէնքը, ո՛չ երկսեռ մանկութեան շատ փափուկ նախակրթութիւնը, ո՛չ ժողովուրդի նիւթական աշակցութիւնը, ո՛չ հոգաբարձութեան թանկագին աշխատութիւնը, ոչ վերջապէս նախակրթարանի նպատակը պիտի ներեն այլեւս ընդունիլ այնպիսիները... Այո՛, այլեւս պէտք է անխնայ կտրել այս փտախտը... Այլեւս բնաւ երբեք չճանչնալ և չուզել գիտնալ ինքնակոչ ուսուցիչներուն գոյութիւնը... Եւ որքան ահագնապէս կը սխալի Կ. Պոլսոյ Ուսում-

խորհուրդը, ինքզինք կարծելով թէ եղած ըլլար միանգամայն վարժապետանոց մը, երբոր անոր ասոր կընծայէ ուսուցչութեան վկայականներ...»

ԱԿԱՐԻ

ՕՐՈՒՆԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

ՎԵՆԵՑԻԱԻ ԼԱՆ

Իր տաճկերէնի բաժնին մէջ՝ իրաւունք օրը օրին արձանագրեց արդէն էական գիծերը այն հետաքրքրալարժ իրադարձութեանց՝ որոնք վերջին երկու շաբաթներու միջոցին բովանդակ աշխարհի ուշադրութիւնը վէնէցուէլայի վրայ կեդրոնացուցին:

Հարաւային Ամերիկայի փոքր հանրապետութիւններէն մէկն է վէնէցուէլան, Գոլոմպիոյ և Պրէզի. իոյ մէջտեղը, երեք միլիոնի չափ, բնակչով՝ Յրանսայի երկու մեծութիւնը ունեցող բեղմնաւոր տարածութեամբ մը ու բաղկացած 13 Դաշնակցական պետութեանց միաւորութեանէն՝ որոնք միակ նախագահի մը գերագոյն իրաւասութեանը կենթարկուին:

Ամերիկայի կեդրոնական ու հարաւային կարգ մը ուրիշ նահանգներու պէս, վէնէցուէլան ալ բնական երկար ժամանակամիջոցէ մը ի վեր կը ներկայացնէ խոռվութեանց, անիշխանական դուրսութեանց քառասային թատր մը, ենթարկուած քաղաքային անվերջ պատերազմներու, ապստամբական, յեղափոխական մշտատեւ շփոթութեանց, որոնց հետեւանքով տեւադառնակ օտարական դրամատէրներու առեւտրական զբաղումները, շահագործական ձեռնարկները ծանրածանր վիճակներ կրեցին. միւս կողմէ, երկաթուղիներ շահագործող կամ վէնէցուէլական զօրաբանակին զանազան պիտոյքներ մատակարարող մէկ քանի անգլիական ու գերմանական ընկերութիւններ՝ յուսահատած իրենց արդար պահանջմանց իբր պատասխան՝ վէնէցուէլայի խոստափոխա-

կան անվերջ ձգձգումներէն, դիմեցին իրենց զեմպանատանց օժանդակութեանը:

Այնպէս որ, 1900ին Պէտլինի դահլիճը իր հպարտակները շահագրգռող այս խնդրոյն կտրգադրութիւնը պաշտօնապէս ձեռք առաւ. դժբախտապէս, անկէ մինչեւ այսօր հակառակ երկու կողմէ առաջ տարուած բանակցութեանց, հակառակ նոյնիսկ խառն դատարանի մը կազմութեան՝ որուն իրատեսութեան վէնէցուէլան կը հաւանէր ենթարկել անհամաձայնութեան առարկայ բոլոր խնդիրներու կարգադրութիւնը, կարելի չեղաւ ունէ կերպով գերմանացի պահանջատէրներու գոհացում կամ ապահովութիւն տալ. ընդհակառակը, այս ամառ վէնէցուէլական մէկ նոր ապստամբութիւն մը նոյն այդ պահանջատէրներու նորանոր փնտնանք հասուցած ըլլալով, գերմանական կառավարութիւնը սպառնաց զինուորական ազգու միջոցներու անյապաղ դիմել, եթէ ան միջապէս վէնէցուէլան երեք միլիոն ֆրանքի հնչուն գումար մը Գերմանիոյ յանձնելու չի փութար:

Գերմանիոյ այս սպառնական վարմունքին ընկերակցեցաւ նաեւ բրիտանական կառավարութիւնը, որը նմանապէս իր ունեցած պահանջներէն աւելի, վէնէցուէլայի դէմ մանաւանդ քէն պահած է 1895էն ի վեր, երբ Ոսկեհանքերու խնդիր մը մաղ մնաց Անգլիոյ ու Ամերիկայի միջեւ պատերազմ մը յառաջ պիտի բերէր:

Հետեւապէս, նախ իրարու հետ համաձայնելէ վերջ, Անգլիոյ ու Գերմանիոյ վէնէցուէլական Գործարարական մէջ ուղարկեցին 15 պատերազմական նաւերէ բաղկացած միացեալ նաւատորմ մը, անգլիացի

դեր-ծովակալ Տուկասի ու գերմանացի քովտու Շէտէրի հրամատարութեամբ, որոնք պաշտօնը ունէին, այն պարագային ուր վէնէցուէլա իրենց պահանջներուն անմիջական գահացում մը պիտի տար, փճացնել վէնէցուէլայի նաւատորմի դր, գրաւել վէնէցուէլական մարքը ու հասցիները, ու խաղաղ պաշարումի ենթարկել ծովագերեայ բոլոր նաւահանգիստները:

Դեկտեմբեր 7ին (Ն. Տ.), Անգլիոյ ու Գերմանիոյ գիւտագիտական ներկայացուցիչները, իրենց պահանջմանց վիճակագիրը վէնէցուէլայի արտաքին գործերու նախարար Էտուարտ Պլանքիոյ յանձնել անմիջապէս ետք ու շահարին առժամապէս ամերիկեան զեմպանին փոխահիով, իրենց հետեւորդներովը թողուցին վէնէցուէլական զաշնակցութեան մայրաքաղաքը՝ Վիեննայ, որպէսզի թշնամական անհաճոյ ցոյցերու չ'ենթարկուին, ու առանց պատասխանի սպասելու գտնել կիսայրա՝ ծովագերեայ նաւահանգիստ մը ուր Անգլիոյ ու Գերմանիոյ միացեալ նաւատորմը համախմբուած էր:

Իսկ երեք օր ետք, Դեկտեմբեր 10ին, Անգլիոյ ու Գերմանիոյ զաշնակցական նաւատորմին երկու հրամատարները վէնէցուէլայի հանրապետութեան նախագահը ուրիշ վերջնազօրով մը պնդած մըն ալ հրաւիրեցին որ 48 ժամէն իրենց պահանջմանց գոհացում տալու փութար. պայմանաւոր լրանալուն ունէ պատասխան ստացած չըլլալով, միացեալ նաւատորմը Երազմանց վէնէցուէլայի կրօնարար ու Բուէրք-Գապէլիօ զինուորական երկու նաւահանգիստները, կործանեց անոնց ամրոցները, գրաւեց մարտային չէնքերը ու ձեռք

ձգեց 15 նաւերէ բաղկացեալ վէնէցուէլայի նաւատորմին 7 նաւերը, որոնց չորսը ընկղմեցուց:

Թշնամութեանց սկզբնաւորութեան յաջորդող այս դիմադրական արագ որքան փախուէ գործունէութիւնը ամենաստիկ գրգռութեանց մատնեցին վէնէցուէլայի ժողովուրդն ու կառավարութիւնը. Գորտաքառի մէջ ու շրջակայիցը գտնուող բոլոր գերմանացի ու անգլիացի բնակիչները կառավարութեան հրամանովը բանտարկուեցան, թէեւ քիչ լետոյ Ամերիկայի զեմպանին միջնորդութեանը վրայ ազատ արձակուեցան. ժողովուրդը փողոցներու մէջ անձնատուր եղաւ երկու յարձակող պետութեանց դէմ նախատական ցուցերու:

Եւրոպական թերթերու բերած նորագոյն տեղեկութեանց համեմատ՝ վէնէցուէլա՝ Ամերիկայի Միացեալ Նահանգներուն միջնորդութեամբը իրաւախօսութիւն առաջարկեց է. ուրեմն, կը մնայ տեսնել թէ Անգլիոյ ու Գերմանիոյ ինչ ընդունելութիւն պիտի ընեն վէնէցուէլայի այս առաջարկին:

Հաւանաբար ասկէ անդին Անգլիոյ ու Գերմանիոյ գործ կունենան Մ. Նահանգներու հետ, որոնց դաւանած Մ'օնրոյէի վարդապետութիւնը (Ամերիկան ամերիկացիներու) ազգութեամբ կը դատու. պարտէ Արիւնեան կիսագնտի գործերուն մէջ եւրոպական պետութեան մը միջամտութիւնը կամ հողային նոր ստացուածք գրաւելու ձեռնարկը. Միջին աշխարհ Նահանգները միջամտիլ հարկ չհամարեցին, փաստ զի անգլիական և գերմանական պահանջումները իրաւացի կը գտնէին. բայց, ինչ պէս ամերիկեան թերթերու լե-

զուն ցոյց կուտայ, շատ ալ չեն ուզեր հանդուրժել որ եւրոպական պետութիւններ ամերիկեան հանրապետութիւն մը շատ ստորնացնեն, իշխանական հովեր առնելով. անգլիացի բնակչական գործունէութիւնը արդէն բաւականէն ազգու կը գտնեն, ու քանի որ վէնէցուէլա համաձայնութիւն կը պահանջէ, Մ. Նահանգներն ալ անգլիացի բնակչական գործունէութեան աւելի երկ սրելուն արգարացի պատճառ մը չեն գտնիր:

Այս տեսակետով ահա, վէնէցուէլական խնդրոյն կարգադրութիւնը շատ աւելի ծանր կերպով թափ մը կ'առնէ:

Տ. Է.

ԻՍԼԱՄԻ ՎԵՐՋԻՆ ԽՕՍՔՆ ԱՌԵԻՐՈՊԱ (*)

Հոս պարտիմ էական կէտ մը նկատուի թեան առնել:

Մենք ձեր՝ Եւրոպացիներու մէջը կը գտնանք խիստ դիտուէ մարդիկ, որոնք խիստ խորիմաստ դիտողներն են. Բայց անտարակուսելի է թէ դուք մեզի ճանչնալու չէք յաջողած: Ձեր ամենէն ճարպիկ զիւնազէտները, ձեր ամենէն կորովաւոր միտքերը միշտ մեր անթափանցելի նկարագրին առջեւ զիջելով ընկճուած կը խոստովանեն:

Ո՞րն է ուրեմն մեր բնութեան խորհուրդը:

(*) Այս չափազանցական յօդուածին առաջին մասը մեր Յէրթ թուով (Սեպտեմբեր 11) հրատարակած էինք. թարգմանութեան ձեռագիրը կորսուած ըլլալով, այսօր միայն բնագրին վրայէն նոր թարգմանութեան մը ձեռնարկել կը կարողանանք:

Ծ. Խ.

Ա. ԵՐՏԱՆԵԱՆ

(38)

ՊԱՏՐԻԱՐԻ ԽՈՒՄԱՐԸ

ԹԻԱՊԱՐՏԸ

ՄԱՍՆ ԵՐՐԻՐԴ

ԼՈՒՍՈՒԱ ԵՒ ՎԱՆԱԿԱՆ

— Ա՛խ, ինչե՛ր չեն կատարուիր սա լեռներու մէջ, սա անտառներու խորը, սա ապառաժներու ծոցը... Հայուն ի՞նչ կը պակսի... հայուն ի՞նչ չկայ: Ի՞նչու համար գերութեան լուծին տակ կը ճնշուի ան, ի՞նչու համար վայրենաբարոյ քուրտին անունէն կը դողայ եւ չկրնար իր իրաւունքը, իր ճակտի քրտինքը, իր պատիւը պաշտպանել... Ո՛հ, Աստուած ամեն միջոց տուած է մեզի. միայն թէ պատրաստե՛նք ներքին ուժը, կազմակերպե՛նք ժողովուրդը, վէնք տանք մեր եղբայրներուն ձեռքը ու ճանչցունենք իրենց պարտականութիւնը: Մեր յոյսը գնենք մեր վրայ. կաթիլ կաթիլ թափուող ջուրը կրնայ լեռան ապառաժը ծակել:

Այս դառն խորհրդածութիւնները մտաբերելով, չարունակեց իր ճամբան ու լեռներու մէջ անհետացաւ:

Ապառաժուտ ու հսկայ լեռան մը ստորոտը տասն երկու հոգիէ բաղկացած զինակիր խումբ մը կանգ կառնէր, երկար ժամերով ճամբորդութենէ մը ետքը:

Խումբին գլուխը կը գտնուէր բարձրահասակ ու յաղթանդամ մարդ մը, որ հագած էր վրացիներու յատուկ վերարկու մը, ուսէն կապած էր խաղիվակ փամփոսակալները եւ մէջքէն վար թուր մը կախած էր: Ոտքերը ձեւաւոր ու մինչեւ ծունկերը ծածկող մուճակներ կային:

Այս պարթեւ մարդը մեր ծանօթ Պատրիկն էր, որ Դարպ-Թարապուէի Թիարանին մէջ տասներկու տարի ապրած էր զարհուրելի դրութեամբ մը:

Այսօր զինակիր խումբի մը գլուխն անցած էր ու ամբողջ անձնու իրութեամբ կաշխատէր իր պարտականութիւնը կատարելու եւ իր վեճը լուծելու: Մայրը, որ մինչեւ թիարանը վազած էր, չէր համարձակած խոչնդոտ հանդիսանալ որդւոյն: Օ՛հ, միայն թէ վերջին անգամ համբուրած էր անոր ճակատը եւ մօր մը վսեմ զգացումով մը ըսած էր.

— Գնա՛, որդի՛ս, գնա՛... չեմ արգելել քեզ որ չղարնես ա՛յն ձեռքերը, որոնք չղթաներդ ամբարցոյցին, չեմ կրնար արգելիլ քեզ որ վրէժը չլուծես քու արիւնը խմող թշնամիէն... Գնա՛... որովհետեւ ինձի պէս արցունք թափող, ինձի պէս իրենց մէկ հատիկ որդւոյն կարօտը քաշող, ինձի պէս յետին ծայր թշուառութեան մատնուող մայրեր կան... Ա՛խ, աչքս ճամբադ չպիտի մնայ, որով-

հետեւ հայրենեաց համար պիտի նուիրեմ քեզ: Աստուած քու հետդ ըլլայ...:

Ու Պատրիկ՝ իր պաշտելի մօր ձեռքը համբուրելով՝ վերջին հրաժեշտը տուած ու ներսէս Արժրուէիին հետեւած էր:

Անկից ի վեր երկու տարի անցած էր. իր պաշտօնը միմիայն Պարսկաստանէն դէնք ու փամփոստ փոխադրել էր: Պաշտօն մը՝ որ ճարպիկ ու հանձարեղ կերպով կը կատարէր: Երկու տարուան մէջ մեծ քանակութեամբ ապամոթեցր փացուցած էր երկիրը:

Պատրիկ ծպտելու մէջ տնտեսական առաւելութիւն մը ցոյց կուտար. այնպէ՛ս որ չինական մը ձեւացած ժամանակ, թէ՛ լեզուն, թէ՛ արտասանութիւնն եւ թէ՛ կերպարանքին բոլոր արտայայտութիւնը կը փոխէր ու երբե՛ք չէր ճանչցուիր իր ընկերներէն անգամ:

Վերջապէս ատեն էր. Պատրիկ հրամայեց խումբին որ բեռները քարերուն տակը դնեն ու քիչ մը հանդիւն:

Ընկերները լուռ ու կարգապահ եղանակով մը բեռները տեղաւորեցին ու կէս մը կռթնած սկսան քնանալ:

Ժամ մը տեւած էր:

Ետեւորը չընկնէր լուռեցաւ. հետէն: Ամբողջ խումբը մէկէն ոտքի ելաւ ու զէպի չընկնէր ուղղեց ուղարկութիւնը:

— Պատրաստ կեցէ՛ք, տղե՛րք, հրամայեց Պատրիկ: Գուցէ՛ մատնուած ենք:

— Պատրաստ ենք պատասխանեցին ընկերները: Պատրիկ յառաջանալով սկսաւ զինակը չորսդին

Մեզի համար անոր բացատրու-
թիւնը պարզ է. բայց գծախառնայէս,
ձեզի համար զայն հասկնալը այնքան
գծաւորին պիտի ըլլար, որ մինչեւ
հիմա մեզմէ մէկը չ'աւարձակեցաւ
զայն ձեզի անկեղծ ու ճշգրիտ կերպով
մը ներկայացնել:

Ու, հաւատցէ՛ք, խորին տխու-
թեան զգացումով մըն է որ այսօր կը
կատարեմ պարտականութիւն մը ու
րուն կարեւորութիւնը ետքերը դուք
իսկ պիտի գնահատէք:

Սորվեցէ՛ք ուրեմն, ո՛ր եւրոպացի
դիտողներ, թէ քրիստոնեայ մը ինչ
դիրքի տէր որ ալ ըլլայ, միմայն
քրիստոնեայ ըլլալու իր հանգաման-
քովը, միւր աչքին մարդկային ամէն
արժանապատուութենէ ինկած կոյր
մը կը նկատուի: Անոր վերաբերու-
թեամբ մեր տրամաբանութիւնը այն-
քան պարզ է որքան որոշ. մենք կը-
սենք.

Մարդ մը որուն զօտողութիւնը ա-
պականուել է միակ նստուածոյ մը գո-
յութիւնը ժխտելու եւ զանազան տե-
սակ Աստուածներ երթալ չի՛նելու աս-
տիճան, մարդկային անբանութեան
ամենէն քարշիւի արտայայտութիւնը
միայն կարող է ըլլալ. անոր հետ խո-
սելը մեր բանականութեան համար
ստորնացում մը պիտի ըլլար ու տիե-
զերքի ստեղծիչին վեհափառութեանը
թշնամանք մը:

Մեր հոգիին մէջ զրուգուած այս
զգացումով, մենք Էրէք լուրջ վի-
ճաբանութեան չենք մտնել քրիս-
տոնէի մը հետ, ով որ ալ եղած ըլլայ,
ու երբ հարկադրուինք անոր խօսք
ուղղելու, միշտ կը խօսինք անսակ
մը զղուանքով ու արհամարհանքով.
զոր գրեթէ միշտ կատարելապէս զսպե-
լու չենք կարողանար, նոյնիսկ երբ
ձեր ամենէն բարձր անհատականու-
թեանց հետ կը խօսակցինք:

Աւելցուցէ՛ք այս ներքին զգացումնե-
րուն վրայ սա յայտնի իրողութիւնները
թէ՛ մեր գրաւոր լեզուներուն բազմա-
տեսակ գծաւորութիւններն երբեք ձեր
գիտուններուն թոյլ չեն տուած որ
մեր միւսիւրման ժողովուրդներուն հո-
գին խորապէս ուսումնասիրէին. թէ՛
դուք բացարձակապէս վտարուած էք
մեր ընտանեկան կեանքին մէջէն. թէ՛

մեր վարդապետական դաստիարակու-
թիւնը անհրաժեշտօրէն ընթանացի է.
թէ՛ մեր բոլոր կրօնական սովորու-
թիւնները, մեր բոլոր նուիրական
գիցավէպերը, մեր բոլոր խորհրդա-
ւոր տեսութիւնները ձեզի համար նոյն-
քան անհասկնալի բաներ են. ու այն
աստի, ուշադրութեամբ քննելով նա-
խապաշարունակութեամբ, աստիճանական
մեկուսացումի այն թանձր մթնոլորտը
որով մեզ կանոնաւորաբար կը շրջա-
պատէք, այն աստի դուք պիտի
կարողանաք հասկնալ թէ ինչո՞ւ հա-
մար, այսքան դարեւ ի վեր, մենք
մնացած ենք ու դեռ կը մնանք ձեր
քրիստոնեայ աշխարհին յուսահատե-
ցուցիչ առեղծուածք:

Հոս անկարելի է ձեզի ցոյց տալ
մեր կրօնական գոյութեան բոլոր ե-
րեւոյթները. Որպէս զի մեր ինչ ըլլա-
լուն վրայ ճշգրիտ գաղափար մը ու-
նենալ կարելի ըլլայ, հարկաւոր է որ
կապէս թափանցէիք սա հիմնական
ճշմարտութեան թէ՛ Իսլամութեան քո-
վանդակ չէնք կանգնած է անսահ-
ման, անբաղդատելի, յաւիտենական
միակ Աստուծոյ մը Միութեանը վրայ.
որ մէկի մը ծնունդ չէ առած, ու
մէկու մը ծնունդ չէ տուած:

Այս հաւատալիքը մասնաւորապէս
քրիստոնեաներու դէմ ուղղուած է.
Այս դաւանանքին համաձայն, քրիս-
տոնէական երրորդութիւնը կրկնա իս-
լամութեան Աստուծոյն ու խտեայ թըշ-
նամին: Այս երկու սկզբունքներու
հակադրութիւնը միւսիւրման հոգիին
համար փորձութեանց ամենէն կրդիչը.
ամենէն անագորոյնն է:

Դուք, քրիստոնեաներգ, ձեր մասն-
կութենէն ի վեր ձեր Եկեղեցիներուն
պատուէրներովը կաղապարուած, եր-
բէք պիտի չկարողանաք երեւակայել
թէ՛ ձեր երրորդութեան միակ անունը՝
զղուանքի ինչպիսի սարսուռով մը մեզ
կը համակէ:

Դիտցէ՛ք գոնէ հետեւեալ անվիճելի
իրողութիւնը ընդունելով. դէպի Գրիս-
տոսի աստուածութիւնը ձեր հաւատ-
քին ու մեր մէջը՝ յաւիտենապէս ան-
անցանելի անդունդ մը գոյութիւն
ունի: Դիտցէ՛ք թէ՛ դէպի մեր միակ
Աստուածը անսահման հաւատքով մը
առելոյս տալ, մեզի համար անկարելի է

մեր անբաղդատելի, յաւիտենական,
անսահման Աստծոյն բացարձակ միու-
թեանը հետէն կամ մօտէն ամենա-
փոքր վերադարձ մը բերող ու եւ է
հարուած ը՛գունել, արտօնել կամ
ներել:

Բնաւ պէտք չկայ ձեզի ապահովե-
լու թէ՛ մենք հոս չենք հետամտիր
կրօնական ու եւ է վարդապետութիւն
մը նշաւակելու, կամ իմաստասիրական
ու եւ է ճշմարտութիւն մը ապացուցա-
նելու: Մեր նպատակն է անկեղծօրէն ու
պայծառապէս ձեզի ներկայացնել մեր
հաւատալիքներուն բնութիւնն ու զօ-
րութիւնը:

Ճշմարիտ կամ անճիշդ, արդար կամ
անարդար, բարոյական կամ անբա-
րոյական, այդ հաւատալիքները կը
կազմեն մեր ալիքի բովանդակ գոյու-
թեանը միակ շարժառիթը:

(Լա Ռելիյո) ՇԵՑԱ ԱՊՏՈՒԼ-ՇԱՔ
(Շարունակելի)

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Վեհափառ Հայրապետ այս
վերջին անգամ Տփղիս երթալուն՝
կողմնակի կառավարիչ իշխան Կա-
լիցինին այցելութիւն տուած է.
հետեւեալ օրը իշխանն ալ փոխա-
դարձ այցելութեան գացած է Ն.
Վեհափառութեան, ու 40 վայր-
կեանի չափ տեսակցած են: Տեղ-
ւոյն թերթերը երբէք բան մը չեն
գրեր Ս. Կալիցինի մասին այս յաճո-
խակի բրած ճամբորդութեանց
պատճառները քիչ թէ շատ բա-
ցատրող պիտութեան և հայ աղ-
գի միջիւն անցած դարձածէն ժո-
ղովուրդը անգիտ սկից պահել կուղ-
ուի, ինչպէս Պոլսի նոյնպէս և
կողմնակի:

— Բեդրսպուրիի հայ ուսանո-
ղութեան կողմէ ի նպաստ աղքատ
ուսանողներու կազմակերպուած ե
րեկոյթը նոյեմբեր 16ին գիշերը

տեղի ունեցած է մայրաքաղաքին
ազնուականներու տան զահիճին մէջ.
ի միջի այլոց յաջողութեամբ եր-
գուած են. «Արիք Հայկազունք»,
«Մեր Հայրենիք», «Ձէյթունցի-
ներ», «Թալանն Եկաւ». Պ. Ն.
Տիգրանեան զաշնակ տծած է և
հակառակ իր կոյր ըլլալուն, մատ-
նիրու զարմանալի նուրբ շարժում.
ներովը հիացուցած է հայ և օտար
հանդիսականները: Ձեւացուցած են
նաեւ հայ գիւղացիի հարսնիք մը
տալիոյ զոռնայով, բայց կարգա-
պահութեան պակասը աչքի դար-
կած է: Հասոյթը գոհացուցիչ չէ
եղած գծադրապէս:

— Վերջին շաբաթ «Նստեժտա»
Հայ Գեր. խումբը յաջողութեամբ
ներկայացուց Շեքսպիրի հուշակա-
ւոր ՀԱՄԼԷԹը: Խոյն հերոսը
յաճախ Տ. Պապանովի անթերի
փայլեցուց, այնպէս որ տրուեստա-
գէտ օտար հանդիսատես խումբ մը
տաճկերէն չ'ուսկնալով հանդերձ,
միւս հանդիսատեսներուն նման
ստեպ ծափահարեց հայ դերասան-
ները, մանաւանդ Տ. Ե. Ե. Ե. Ե. Ե.
որ Օթելլոյի դերը իրմէ սպաս-
ուածէն լաւ կատարեց, այս տի-
կինը եթէ քիչ մը աւելի աշխատի,
կը խոստանայ իր կազմուածքի
բնական ճոխութեան միացնել դե-
րասանուհիի մը ձեռքերն ալ, թա-
տերախաղը հայերէնէ տաճկերէնի
թարգմանած էր Տ. Գալէմեան,
որ պէտք է խոստովանի թէ՛ շատ
յաջողած էր բաղդատմամբ իր ու-
րիշ թարգմանութիւններուն: Այս
ամէնի վրայ պէտք է աւելցնենք
թէ փոքրիկ սրահին մէկ մասը պա-
րուպ էր, օգին աննպաստ ըլլալուն
պատճառաւ:

— Պոլսոյ թատերադի. Գալփաեան
Որբանոցին համար տիկիններէ
բաղկացեալ խնամակալութիւն մը

պատգունել: Վերջապէս նշմարեց երկու հոգի, որ
ապստամբներէն վեր կենէին: Մին մանկամարդ կին
մըն էր, իսկ միւսը՝ փոքրիկ մանուկ մը:

— Տղերք, գոչեց Պատրիկ խոնուած ձայնով մը.
մի՛ չփոխուիք. եկողները կին մը ու փոքրիկ մա-
նուկ մըն են:

Այս ըսելով, Պատրիկ աճապարեց թշուառ կնոջ
օգնութեան փութալու, որ գերագոյն ճիգեր կընէր
ապստամբներէն վեր բարձրանալու:

Երբ մանկամարդ կինը մէկէն ի մէկ իր գէմը
նշմարեց զինուած Պատրիկը, բոլոր մարմնով
սարսաղ ու իր գոյնը փոխեց:

— Մի՛ վախճար, մրմնջեց Պատրիկ՝ հայերէն
լեզուով մը:

— Հայ էք... հարցուց մանկամարդ կինը դողդղա-
լով:

— Այո՛, հայ եմ... անհոգ եղէ՛ք... տուէք ինձի
ձեռքերիդ... մի՛ դողաք, պատուիրեց՝ քաջ զի-
նակիրը:

Մանկամարդ կինը նախ մանուկը վեր բարձրա-
ցուց, յետոյ ինքը ելաւ:

— Ի՞նչ եղաւ... ի՞նչու այս լեռներու մէջ եկած
էք, հարցուց Պատրիկ հետաքրքրուած ձայնով մը:

— Ա՛խ, կանաչ արեւուդ սիրոյն ըլլայ. կտրի՛չ,
ձեր բաղձն եմ ինկեր... էրի՛կս, էրի՛կս արիւնի
մէջ թողուցին... զարկի՛ն, քուրտները զարկի՛ն...
բացազանչեց մանկամարդ կինը՝ չկրնալով իր ար-
ցունքները զսպել:

— Ո՛ր է... ո՛ր կողմն է... պօռաց Պատրիկ:

— Էս լեռան տակը... ճամբուն վրայ:

— Պատճառը:

— Ա՛խ, էտոնց արեւը կտրի... չո՛ւն են, չո՛ւն...
ի՞նչ ասեմ... վա՛խ, խեղճ էրի՛կս, խեղճ էրի՛կս:

Պատրիկ անմիջապէս երկու զինուած երիտասարդ-
ներու հետ ապստամբներէն զրեթէ վար նետուեցաւ
ու մանկամարդ կնոջ ցոյց տուած կողմը վազեց:

Դեռ ապստամբները վերջացած չէին, Պատրիկ աւե-
սաւ երկու քուրտերը, որոնք անձաներու մէջ ման
կուզային ու բարձր ձայնով մը կընէին:

— Լէհա նինա՛, լէհա նինա՛...:

Տարակոյս մը չէր մնար... ատոնք էին մանկա-
մարդ կնոջ էրիկը սպաննողները: Ուստի, առանց
սպասելու, ապստամբին հետեւէն իրարու վրայ կրա-
կեց իր Մօսնի հրացանը: Քուրտին մէկն ինկաւ,
իսկ միւսը վերաւոր վիճակի մը մէջ փախչելու կը
շնար, երբ գնտակ մըն ալ անոր կռնակին հասաւ
ու զանի տապալեց:

Պատրիկ ապստամբներէն վար իջաւ ու սատկած
քուրտերուն մօտեցաւ: Մէկը հոգին փչած էր. իսկ
միւսը մահամեծ էր:

— Շո՛ւն, ի՛նչ կը փնտէիր այս քարերու մէջ,
գոչեց Պատրիկ՝ մահամեծին կռնակէն հրելով:

Արեւան ճապարկեցներու մէջ տապալուող քուրտը
մոլորագին նայուածք մը նետեց Պատրիկին վրայ ու
խղճուած ձայնով մը կակաղեց:

— Հաւա՛ր... ֆլա՛յ է, ֆլա՛յ...:

Ու աչքերը գոցեց:

Պատրիկ երկու ընկերներու հետ դէպի ճամբուն
երկանք գիծեց: Հետեւէն նշմարեց մարդ մը որ մէկ
ձեռքը գետինը դրած, իսկ միւս ձեռքը կուրծքին
փակած գերադուր ճիգեր կընէր ոտքի ելնելու հա-
մար, բայց չէր կրնար:

Աճապարանքով մը անոր մօտեցաւ ու թեւէն
բռնեց:

— Ի՞նչ եղար, ի՞նչ եղար... գոչեց Պատրիկ:

— Ա՛խ, թեւէս բռնէ... պուտ մը ջուր տուր...
իրիւրայ, մրկեցա՛յ... Աստու սիրոյն ըլլա՛յ...
սի՛րտս, սի՛րտս...:

Պատրիկ անմիջապէս վերակապը քակեց, անոր
մէջ պահուած փոշին խեղճ մարդուն վերքերուն վրայ
ցանեց ու ամուր մը կապելէն ետքը նստեցուց
զինքը:

Վէրքին սաստիկ ցաւը դեղին ազդեցութեամբ քիչ
քիչ դադրած էր: Խեղճ գեղացին հազիւ թէ ուշքի
եկաւ, յանկարծ սոսկումով մը ոտքի ելաւ ու գո-
չեց:

— Հապա կի՛նս... հապա զաւա՛կս... ա՛խ, տա-
րի՛ն, տարի՛ն... քուրտերը փախցուցի՛ն:

— Անհոգ եղի՛ր... անոնք աղատ են... մեր քովն
են, բնահատեց Պատրիկ ու չթողուց որ յառաջա-
նար: Թշնամիներդ ալ սպաննուած են:

— Ո՛վ սպաննել էտ շուները:

— Մենք սպաննեցինք:

— Դո՛ւք:

— Ո՛վ էք դուք:

— Աւազակներ:

— Այո՛:

— Ձէ՛ որ հայ էք:

— Հայ աւազակներ ենք:

(Շարունակելի)

կազմուցեալ: Իսկ նոյն հաստա-
տութեան ներքին հսկողութիւնը
յանհնուցաւ Բրիտանիոյ Մայրս-
պետին: Նոր խնամակալութիւնը
Պոլսոյ մէջ հանգանակութեան
սկսած են:

Ի Խ Թ Ա Ր

Կազմուցեալ պետեղևնի էրան
էտուկէմիշ օրան ապօնելիքիմիզին
պիտա քէկիւր պօրաշարունը կեօն-
տեղեկելի քէմա օրունը:

ՀԱՎԱՏԻՍԱԹԸ ԲՕԼԻԹԻԳԻՅԷ

Թ Ի Ի Ր Ք Ի Ա

Պապը Աւի քէնտի էվրոքատաքի
էլիւրէրի վասիթասը իւէ պէօյիւք
տէօվէթլէրէ խիթապ պիր պէյան-
նամէի ումուժի կէօնտէրմիշ տիր:
Իշպու պէյաննամէտէ Պապը Աւի
տէյօր քի՝ Թիւրքիանըն Բոււնէի
վիւաշէթլէրի իշիւն իգթիքա օլան
թէնպիրլէրի իթիթիստզ իթմիշ
վէ իճրաթ իշիւն միւմքին օլանը
եաբմը տըր: Շիմտի աշէի շանա-
նէտէն աաաիշ վէ սիւքիւնէթ հիւքմ
իթմէքտէ իմիշ վէ եէնի գարը-
շըգլըգ զուհուր իտէճէկիւնէ տալիւր
հիշ պիր տէլիլ կէօրիւնմէգ իմիշ:
վէ մէգքիւր պէյաննամէ շէօլլէ
տէվամ իտէյօր: «Հօգլարըն գօր-
գուսը իւզրէ, իլէրուտէ զուհուր
կէլէճէկի զանն օլընան գարըշըգ-
լըգա Պապը Աւի մէսուլ թուլթ:
մագ հագսըզլըգ օլանագ տըր:
Պապը Աւիին գանաթ հասըլ
իթմիշ օլտըղը իւզրէ, օլ եօլտա
գարըշըգլըգլար եալընըզ Պուկա-
րիատան կէլմէսի մէհուզ օլան սի:
լահլը շէթլէրտէն զուհուր իտէ-
պիլիւր, վէ պու ահպալըն մէնպասը
Պուկարիանըն խօսպիլիլիւնտէ ա-
րամալը տըր: Նիհայէթ Պապը
Աւի՝ վուգա կէլէպիլէճէք հէր
նէվ իլթիլալտան տօլալը հիշ պիր
մէսուլիլէթ գապուլ իտէմէլէճէ-
կիւնի իւլվէ իտէրէք, պէյաննա-
մէսիւնի գարամըլ տըր:

— Նօվօսի նամ րուս կազէ-
թասը՝ Մաքէթնիայա միւքէմմէլ
պիր օթօնօմի իգթիքա օլտըղընը
սէօլլէլուպ, Սուլթանըն հաքիմի-
լէթի ալթընտա պիր բրէնսին
(ընդհանուր-կառավարիշ) նասպ օ-
լընմասը լազըմ տըր տէյօր:

Սօն նօմէրօմըգտա մուլթասա-
րէն նէշր իթմիշ օլտըղըմըզ Բու-
սիանըն պէյաննամէսի իշիւն տալի
աթփը քէլա իտէրէք, մէգքիւր
կազէթա տէյօր քի, պու նօթա-
նըն Սերպիայա շուսուլի օլմա-
յուպ, եալընըզ Պուկարիա ի-
շիւն տըր, զիրա Սերպիա տալի
Թիւրքիայա գարըշ շէտիտ թէտ-
պիրլէր գուլանագտան իճթիւնպ
իթմիշ աիր: հալպուքի Պուկա-

րիատա էկէր թէշվիգաթ տէվամ
իտէճէք օլուր իսէ, իքի պէօյիւք
տէօվէթլէր անը սիւքիւնէթէ իճ-
պար իթմէկէ մէճպուր օլանագ-
լար:

— Սթանպօլտան Գեկտեմգեր 19
թարիխի Թաւնա վէրիլէն պիր
թէլէկրաթիւ նազարէն, իսլամօր-
տան 50 քիշի գետար թէքրար
տէրտէսթ օլընմըշլար: պուկարտա
թէնէրալլար վէ տիկէր գապիլիւր
տալի վար լըշ:

ԲՈՒՍԻՆՎԷ ԱՎԷ ԱՌՍՏՐԻԱ

Բուս խարիճիւն նազրր Գօնթ
Համատօրփըն շուս արա Սօֆիատա
վէ Պէկրատտա պիրէր իքիշէր
կիւն գալարագ վիէննայա կիթ-
մէլէրինին հապատիսի՝ կազէթա-
լարը էնվաի միւթալէթա տալ-
տըրմըլ տըր: Պաղըլարը՝ Համատօ-
փըն պու եօլմըլըզ անըն շախտէն
իմէրաթօր ձրանց Եօլէֆի կէօր-
մէք արգուսընա հալ իթմէք իս-
թէյօրլար իսէտէ, Մաքէթնիա
մէսէլէսինին եէշիլ ետղըլտանէլէր
իւզէրինէ վազ օլընտըղը շուս սը-
րատա պու եօլմըլըզն էհէմմիլէ-
թի պէօյիւք օլտըղընը տալիլի-
թիւրաթ իթմէք: էն քէնտիլէրինի
ալամայօրլար:

Վէտօուքի րուս կազէթասը՝
պու եօլմըլըզ Բուս վէ Աւստրիա
տէօվէթլէրի պէնիւնտէ Պալգան
մէսէլէրի իշիւն իթմիթագը
թամմէ մէվմուտ օլտըղընը իմա
իտէր տէյուպ շէօլլէ տէվամ իտէ-
յօր: «Թիւրքիանըն նէշր իթմիկի
իսլահաթ ճէտվէլի հիշ պիր թա-
րաֆտա մէմուսիլէթ հասըլ իթ-
մէտի: էֆքեարը ումուժի մէղքիւր
ճէտվէլի թիւրքիւն վագըթ գա-
զանմագ իշիւն էօկի օլուսպաղը-
ղընը եէնի պիր նիւմուսէսի տիր,
տէյուպ թագպիլի իտէյօր: Գօնթ
Համատօրփըն վէ գօնթ կօլու:
խօսպիլիւն միւլագաթլարը՝ շու-
թէհիլէլի վէմանտա իգթիքա կէօ-
րիւն ումուժ պիր գօնթէրանսըն
Պալգանլար իշիւն պախշ իտէմէլէ-
ճէկի սէմէրէի հուսուպա կէթիլէ-
պիլիւր»:

Տիկէր պաղը էվրագը հապատիս
տալի շուս սըրա Աւստրիա վէ Բուս
տէօվէթլէրինէ իքի մագստէ հալ
իտէյօրլար: էվվէլա, Թիւրքիանըն
էվրօքա գըթասընտա իսլահաթ
իճրա իթմիլմէք: վէ իքիւնիսի,
ուֆագ տէօվէթլէրին Պալգանտա
սուլհը իլալ իթմէլէրինէ մէյ-
տան վէրմէյուպ, պուկարը լըզը
թուլթմագ:

— Գօնթ Համատօրփըն պիր կիւն
Սօֆիատա վէ իքի կիւն Պէկրատ-
տա գալտըգտան սօնրա տըրն
28 ինտէ վիէննայա կիտէճէկիւնի
վիէննա վէ Պէրլին կազէթալարը
եազուպ, անըն պուկար վէ սըրպ
նազըրլարընա շիֆահէն նասիհաթ-
լար վէրէճէկիւնի վէ պու սուրէթլէ
էֆքեարընը անլէրէ տալա կիւզէլ
անլատապիլէճէկիւնի իւլվէ իտէ-
յօրլար:

Պու ճիւլէ իլէ պէրապէր էր-
մէնիտտըն ահպալը հազրէի մաղ-
տուրիլէսլէ վէ անըն իսլահաթ
տաի: հիշ պիր թարաֆտան պահս
օլընմայուպ, շուս սըրա հէրքէս
Մաքէթնիա մէսէլէսի իլէ մէշ-
ղու օլուր: Ֆագաթ պու մէշղու
իլլէթին կիւզէլ պիր նէթիճէ հա-
սըլ իտէճէկիւնէ շիմտիլիք տալա ի
նանմայօրըզ:

ՏԱՆԻԼԻՅԷ

Պուկարիանըն սէնէկի (1903—
1904) պիւտէճէսի հիւքիւմէթ թա-
րաֆընտան Սօպրանիէնին թէտգը-
գընա իհպէ օլընտը: 97,682,871
ֆր. վարիտաթ վէ 98,017,900 ֆր.
մէստրիֆ կէօթէրէրէք 333,029
ֆր. արթիլօր: Հարպիլէ մէստրի-
ֆի 23,210,362 ֆր. կէօթէրմիշ
տիր:

— Բուս խարիճիւն նազրր Գօնթ
Համատօրփըն շէհրի հալըն 27 սինտէ
(ալաֆրանկա 12 յունուար) Սօ-
ֆիայա եէթիլէճէկի վէ օրատա
պիր կիւն գալտըգտան սօնրա Պէլ-
կրատ թարիգի իլէ վիէննայա կի-
տէճէկի Սօֆիատան պիլտիլիլմիշ
տիր:

— Մալէթնիատան ֆիւրար ի-
տէն մահաճիլլէր սինօր իւզէրինտէ
կիւնպէ կիւն արթմագտա օ-
լուպ, պուկարըն հալի բէք գա-
րար օլտըղընը Սօֆիա հիւքիւմէ-
թի իլան իթիլ տիր:

Մալէթնիալը մուհաճիլլէրէ
իանէթէն Ձա: 10000 րուպիլ վեր-
միշ տիր:

Վիւքէլա րէյիսի Մ. Տանէֆ տա-
լի Սօպրանիէտէն մէղքիւր մու-
հաճիլլէր իշիւն 55000 ֆր. իանէ
իսթէմէլէ տէմիշ տիր «վագա»
մուհաճիլլէրին վաթանլարընա ալ-
տէթ իթմէլէրի տահա է: օլանագ
ըտը վէ պուկար իշիւն հիւքիւմէթ
տալի շալըշմալը րու: ֆագաթ
շիմտի Մալէթնիատա հիւքիւմ ի-
տէն տէհէթտէն օնլար գօրգուպ,
կէրի կիթմէք իսթէմէլլար, ան-
լէրի ճէպրէն կէրի շէվիլմէք վէ
շուս շէտիտ զըշտա անլէրէ մուս-
վէնէթ իթմէմէք ինանիլէթէ գար-
շը օլանագա:

Պիլ ալտէրէ վիւքէլա րէյիսի՝
Բրէննէ վէ Սլա խարիճիլա
շիւքէթիւնէ՝ կէօնտէրմիշ օլտըղը
իանէտէն տօլալը՝ պէյանը թէ-
շէքքիւր իթմի: վէ Ձարըն 10000
մուպիլ իանէ եօլամըլ օլտըղընը
սէօլլէտի, վէ ալգըլար իլէ նօթ-
գընա խիթամ վէրիլտի:

Թալէպ օլընան 55000 ֆր. իա-
նէ իթմիթագը արա իլէ գապուլ
օլընտը:

— Պէլիլէրինտէ մուպալէնէթ
վագը օլան իքի Մաքէթնիա գօ-
միլէլէրինին րէյիլլէրի Մ. Ձօն-
շէվ վէ Մ. Սարաֆիլ թէքրար
իթմիթագ ու իթմիլհատ հասըլ
իթմէլէ շալըշտըլար իսէտէ, քէնտի
մուրախալարըն ալիլէն իճրա իթ-
տիլլէրի միւլէքէրէլէր սէմէրէիլ

գալտըղընտէն, պիր: շէմէմիլլէր
տիր: Ալըր իշիլլէթէլէս:

ԲՈՒՍՈՒՆԻ

Գրալ Գարօլըն Պէլլիտա վէ
Սթանպօլա կիտէճէկի միւրէվիլի
տիր: պախուստա Պէլլիտա կիթ-
մէսի սահիհ կէօրիւնիլլար:

— Մէպուսան մէլլիլիտէ վիւ-
քէլա րէյիսի Մ. Միլլիլա Գրա-
լըն նուլթընա վէլիլլէթ ճէվօպ-
նամէնին միւլէքէրէսի կանաթընտա
տէմիշ տիր: «էն մուհիլ մէսէլէ-
միլ մալիլէ վէ պիտէ՝ մէսէլէսի
տիր, նազըրլարան իւշ քիշինին
տիւշմէլլէրինէ սէպէպ օ օլմըլ տըր:
«Գրալ Գարօլըն Պուկարիայա
կիթմէսի ի էնս Ֆէսիլնանտըն
թէլլիլիլի իւլլիլիլէ վոգա: պուլ-
տը: Շիւքատա Բուսալ, եալընըզ
մուհաթէպէ իլիմիշ օլտըղընընտան
Շիւքա մէրասիլի տէ եալընըզ
Բուսլար իշիւն իճրա օլընտը պու-
տա թաաճուլ իտէճէք էիշ պիր
շէլ եօգտըր: Ֆագաթ իւլլիլտա
Գրալ Գարօլ պախսէն հէ րումէն
վէ հէմ րուս աաքէպէրինի գօ-
մանտա իթմիշ օլմաղէ, պու տէ
ֆա օրատա Դարըն շախտէն ա-
լիտ մէրասիլ իճրա օլընտը»:

Քէլա Մ. Սթանպօլա Բու-
մանիլըն խարիճի օլիլիլիլագաթ-
նա աթփը քէլամ իտէրէք տէտի:
«Բուսանիա լէք ալլիլանի վէ գօն-
շուլարլէ տօթանէ ապրիսնագ
արգուսընտա արը: հէր պիր հիւ-
քիւմէթ վագիթէտար տըր քի
իւնանէպաթը տօթանէիլ լէքէ-
լէնտիլէն ուլագ վուգուլլարա
էհէմմիլլէթ վէրմէլին: իշիլ Սօ-
ֆիատա վէ Պուլլիլէտէ պու մագ-
սէտէ շալըշտընագա վէ էլլէքիւ-
նէթլի հալին մուհաթիւլլարնա
ղալլէթ օլընագտա տըր»:

ԾԱՆՈՒ ԳԻՐՔԵՐ

ՆՈՐ ԵՐԳԱՐԱՆ, կամ ՄՐՈՒՆԷ ՀԱՅ-
ԿԱԿԱՆ: Այս երգարանը Բ. Բնիկ
տպագրութեամբ աւելի ճոխացած ու բա-
րեփոխուած է, եւ հակառակ ինչոյն
առանձնութեանը կը պարունակէ մը-
գային հին ու նոր խիտ շառ հր-
գեր: Գին 1 Ֆր.

ՆԵՏԱ կամ ՄԱՄԻՍ ՊԱՏՄԱՆԸ,
Պուկարիայա ապառաթիւնէն ուսմ
Պուկարիա գիւլալիլին Թուրքիէ կը-
րած տառապանքները ու անոնց ինտ
ու կացը կը պատկերացնէ: Եւս հե-
տաքերակա: Գին 50 ՍԱՆՏ.

ՀԱՅՐԵՆԻԿԻ ՀՈՂՆԵՐ: Պատկը մը
Տաճկաստանի իրական կեանքին,
գրեց Ղ. Նահապետեան: Գին 1 Ֆր.

Այս գիրքերը տառալու հասար
պէտէ գիմիլ իրաւունքի խմբալու-
թեան, բօլթի հալըն 10ւլլան
սանթիմ միտաղը զրկիլով: Իսկ գիր-
քերու արժէքին համար, իթէ ալլիլ
գիւրութիւններ պակսին, կ'իլլա ուսի
նամակագրօշմ 10 Օ/0 գ'ղընով:

Одговорникъ Н. Драгулевъ
Меч. на Хр. Н. Войниговъ—Въ рна